

« Կաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սուքիասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ ՀՀ ՁՈՒ կապի և ԱԿՎ վարչության պահեստ՝ սվան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 գորմաս :

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատուց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՛ր՝ ելնելով Ապրանքի քննության և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և շանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ «Օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 14 119 934 (տասնչորս միլիոն հարյուր տասնինը հազար ինը հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնա- ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացուցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացուցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացուցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 3-րդ, 4-րդ, 5-րդ, 51-րդ, 53-րդ, 76-ից-88-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից սահմանված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՐՈՒՄԵՐԻ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և լվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի լավանքների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվն համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել

գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բազրկանի 5
ՀՀ ՖՆ աշխատունակացման գործառնական վարչություն
ՀՀ 00001144079
ՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՑՆ դեպարտամենտի պետի ՊԺԿ



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Մ-Թրեյդայն» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Երզնկյան 42, բն 13
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500926005660
ՀՀ 00130656

Տնօրեն

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

(Handwritten signature and stamp)
2/4. 006016279
(Handwritten signature)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ը/հ	Ապրանքի անվանում	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	Էլեկտրոնային պարագաներ (Մինի ԱՀԿ-ի սնուցման բլոկ)	Մինի ԱՀԿ-ի-Panasonic KX-TDA100/200 սնուցման բլոկ KX-TDA0104XJ, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
2	Էլեկտրոնային պարագաներ (TA-57 հեռախոսային ապարատի վեր. կոմպլեկտ N 1 արկղ)	1-ին դարակ. ինդուկտոր 1 հատ, բռնակ 3 հատ, կլեմա 3 հատ, հիմք 3 հատ, 2-րդ դարակ. տալիոլակ 20 հատ, պտուտակ 50 հատ 3-րդ դարակ. զսպանակ 20 հատ, խրոց 1 հատ, միջուկ 2 հատ, 4-րդ դարակ. զսպանակ 2 հատ, միկրոֆոն ԴԷՄԵ-1Ա ՌԼ3.842.032 ՏՈՒ 6 հատ, կապտուլային հեռախոս ԴԷՄԿ-6Ա 3 հատ, զանգ 1 հատ, ՄՏ-50-ի տպասալ 4 հատ 5-րդ դարակ. տրանզիորմատոր 2 հատ, դրոսել 2 հատ, 6-րդ դարակ. միկրոհեռախոս ՄՏ-50 2 հատ, լար 6 հատ, ռեզինե ականջակալ 2 հատ , Արտադրման տարեթիվ 2000թ. և բարձր
3	Էլեկտրոնային պարագաներ (Խտացուցիչ Պ-303-ի ԼՕ-1 բլոկ)	Կազմը՝ բլոկ ՊՎՈՒ,ՌՌՈՒ-1,ԱՌՈՒ,ԴՊ,ԿԱՍ,ՊՈՒ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
4	Էլեկտրոնային պարագաներ (Խտացուցիչ Պ-303-ի ԻՊՕ-3 բլոկ)	Կազմը՝ բլոկ ՄՐ-3,ԴՍՎ-3,ՁԳ,ԳԼ,ՊՌ,ՊԵՌ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
5	Էլեկտրոնային պարագաներ (Խտացուցիչ Պ-303-ի ԻՕ-3 բլոկ)	Կազմը՝ բլոկ ՄՐ-3,ԴՍՎ-3, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
6	Էլեկտրոնային պարագաներ (Տպասալ)	Տպասալ KX-TD50175C Panasonic KX-TDA500-ի համար, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
7	Էլեկտրոնային պարագաներ (Տպասալ)	Տպասալ KX-TD50290CE Panasonic KX-TDA500-ի համար, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
8	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1ժ29Բ)	Լամպ 1ժ29Բ, բարձր հաճախականության պենտոդ, սնուցման լարումը 1,2 В կամ 2,4վ, նախատեսված է բարձր հաճախության լարման ուժեղացման համար, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 5 գրամ , Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
9	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1ժ24Բ)	Լամպ 1ժ24Բ, բարձր հաճախականության պենտոդ, սնուցման լարումը 1,2 В կամ 2,4վ, նախատեսված է բարձր հաճախության լարման ուժեղացման համար, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 4 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
10	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1Պ24Բ)	Լամպ 1Պ24Բ, բարձր հաճախականության պենտոդ, սնուցման լարումը 1,2 В կամ 2,4վ, նախատեսված է բարձր հաճախության տատանման ուժեղացման համար, ապակյա տարայով, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 5,5 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
11	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ78Բ)	Լամպ ԳՈՒ78Բ, գներատորային տետրոդ, նախատեսված որպես ուժեղարար բարձր հաճախության տատանումների համր, միաշերտ ազդանշանների ուժեղացում ռադիոհաղորդիչ սարքավորումներում 250 Մհց հաճախականության տիրույթում 2,5 կՎտ, մետաղակերամիկական ձևավորմամբ, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 1000 ժամ,քաշը 1800 գրամ, հովացումը օդային 280մ3/ժ, Արտադրման տարեթիվ 2007թ. և բարձր
12	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ1Պ)	Լամպ 6ժ1Պ , ապակյա տարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 15 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
13	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ2Պ)	Լամպ 6ժ2Պ, ապակյա տարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, օգտակար աշխատանքային ժամանակը ոչ պակաս 5000 ժամ, քաշը 15 գրամ, Արտադրման տարեթիվ 1995թ. և բարձր
14	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ814)	PNP անցումով ԿՏ814 տրանզիստոր, հզորությունը 10Վտ, կոլեկտոր-բազա լարումը 40վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 5վ, հոսանքի ուժը 1500մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 С, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
15	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր	PNP անցումով ԿՏ815 տրանզիստոր, հզորությունը 10Վտ, կոլեկտոր-

	ԿՏ815)	բազա լարումը 40վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 5վ, հոսանքի ուժը 1500մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
16	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր1Տ313)	PNP անցումով 1Տ313 տրանզիստոր, հզորությունը 100մվտ, կոլեկտոր-բազա լարումը 12վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 0.7վ, հոսանքի ուժը 50մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
17	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ816)	PNP անցումով ԿՏ816 տրանզիստոր, հզորությունը 25վտ, կոլեկտոր-բազա լարումը 40վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 5վ, հոսանքի ուժը 3ա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
18	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ818)	PNP անցումով ԿՏ818 տրանզիստոր, հզորությունը 60վտ, կոլեկտոր-բազա լարումը 40վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 5վ, հոսանքի ուժը 10ա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
19	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2ՏՍ613)	Տրանզիստորային մատրիցա 2ՏՍ613 NPN անցումով, հզորությունը 800մվտ, կոլեկտոր-բազա լարումը 60վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 4վ, հոսանքի ուժը 400մա, աշխատանքային ջերմաստիճանը -60...+120°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
20	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ955Ա)	Տրանզիստոր ԿՏ955Ա (2Տ955Ա), կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 20ԲԷ, մաքսիմալ լարումը 28վ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+125°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
21	Էլեկտրոնային պարագաներ (Դիոդ CHNC202KPT)	Բարձր արագությամբ փոխանցատիչ դիոդ CHNC202KPT, հոսանքի լարումը 80վ, ծախսը 200մվ, աշխատանքային պայմանները -55+125C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
22	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր Պ210Շ)	Տրանզիստոր Պ210Շ, գերմանիի p-n-p ունիվերսալ անցումով, մետաղական կորպուսով, քաշը 37գ, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
23	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր Պ217Վ)	Տրանզիստոր Պ217Վ, գերմանիի p-n-p ունիվերսալ անցումով, մետաղական կորպուսով, քաշը 12.5գ, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
24	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ808Ա)	Տրանզիստոր ԿՏ808Ա(2Տ808Ա), կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 50ԲԷ, մաքսիմալ լարումը 25վ, քաշը 22գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
25	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ809Ա)	Տրանզիստոր ԿՏ809Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 40ԲԷ, մաքսիմալ լարումը 400վ, քաշը 12գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
26	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ812Ա)	Տրանզիստոր ԿՏ812Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 50ԲԷ, մաքսիմալ լարումը 650վ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
27	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ827Ա)	Տրանզիստոր ԿՏ827Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 125ԲԷ, մաքսիմալ լարումը 100վ, քաշը 21գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
28	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ840Ա)	Տրանզիստոր ԿՏ840Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 60ԲԷ, մաքսիմալ լարումը 900վ, քաշը 20գ, աշխատանքային ջերմաստիճանը -60...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
29	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ904Ա)	Տրանզիստոր ԿՏ904Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 5ԲԷ, մաքսիմալ լարումը 60վ, քաշը 6գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
30	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Ա)	Տրանզիստոր ԿՏ920Ա, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 5ԲԷ, մաքսիմալ լարումը 36վ, քաշը 4.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
31	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Բ)	Տրանզիստոր ԿՏ920Բ, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 5ԲԷ, մաքսիմալ լարումը 36վ, քաշը 4.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
32	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Վ)	Տրանզիստոր ԿՏ920Վ, կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 25ԲԷ, մաքսիմալ լարումը 36վ, քաշը 4.5գ, աշխատանքային ջերմաստիճանը -50...+75°C, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
33	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ950Ա)	Տրանզիստոր ԿՏ950Ա(2Տ950Ա), կրեմնի n-p-n ունիվերսալ անցումով, հզորությունը 60ԲԷ, մաքսիմալ լարումը 28վ, քաշը 6գ, աշխատանքային

		ջերմաստիճանը $-60...+125^{\circ}\text{C}$, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր Տրանզիստոր ԿՏ951Ա(2Տ951Ա), կրեմնի $n-p-n$ ունիվերսալ անցումով, հզորությունը 25ԲԷ, մաքսիմալ լարումը 28վ, քաշը 3.5գ, աշխատանքային ջերմաստիճանը $-60...+125^{\circ}\text{C}$, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
34	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ951Կ)	Տրանզիստոր 2Տ208Ա, գերմանիի $p-n-p$ ունիվերսալ անցումով, հզորությունը 200 մԲԷ, մաքսիմալ լարումը կոլեկտոր-բազա 20վ, լարումը էմիտտոր-բազա 10վ, քաշը 0.6գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
35	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2Տ208Ա)	Տրանզիստոր ԿՏ608Բ, մետաղեապակյա կոդալուսով, $n-p-n$ ունիվերսալ անցումով, հզորությունը 0.5ԲԷ, մաքսիմալ լարումը կոլեկտոր-բազա 60վ, լարումը էմիտտոր-բազա 4վ, քաշը 2գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
36	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ608Բ)	Ինտեգրալային միկրոսխեմա 134ԼՌ1, 4 տրամաբանական 2Ո-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
37	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 134ԼՌ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 133ԼԱ3, 4 տրամաբանական 2Ո-HE էլեմենտ, պարունակում է 56 ինտեգրալային էլեմենտ, լարումը 5 Բ $\sim 10\%$, քաշը 0.5գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
38	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ3)	Ինտեգրալային միկրոսխեմա 133ԼԱ7, 2 տրամաբանական Ո-HE էլեմենտ, պարունակում է 20 տրամաբանական էլեմենտ, լարումը 5 Բ $\sim 10\%$, քաշը 0.5գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
39	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ7)	Ինտեգրալային միկրոսխեմա 133ԼԱ8, 4 տրամաբանական Ո-HE էլեմենտ, պարունակում է 32 տրամաբանական էլեմենտ, լարումը 5 Բ $\sim 10\%$, քաշը 0.5գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
40	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ8)	Ինտեգրալային միկրոսխեմա 140ՌԻԴԱ, պարունակում է 22 ինտեգրալային էլեմենտ, լարումը 6.3 Բ $\sim 10\%$, քաշը 1.5գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
41	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 140ՌԻԴԱ)	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՊ1, 100 և 300կՎց կոմուտացիոն հաճախության ինպուլսային ստաբիլիզատոր, պարունակում է 24 ինտեգրալային էլեմենտ, լարումը 6.3 Բ $\sim 10\%$, քաշը 1.5գ, աշխատանքային ջերմաստիճանը $-60...+125^{\circ}\text{C}$, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
42	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՊ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ1Բ, լարման կարգավորիչ, պարունակում է 24 տրամաբանական էլեմենտ, մոտքային լարումը 20վ, էլքային լարումը 3-12վ, հոսանքի ծախսը 150մԱ, քաշը 1.4գ, աշխատանքային ջերմաստիճանը $-60...+125^{\circ}\text{C}$, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
43	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ1Բ)	Ինտեգրալային միկրոսխեմա 159ՆՏ1, տրանզիստորային $n-p-n$ մատրիցայով, հզորությունը 50 մԲԷ, մաքսիմալ լարումը 20վ, քաշը 1.3գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
44	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 159ՆՏ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼԱ2 կամ համաթեք, միջին ճշտությամբ օպերացիոն ուժեղարար, պարունակում է 45 տրամաբանական էլեմենտ, լարումը ~ 15 Բ $\sim 10\%$, հոսանքի ծախսը 50մԱ, քաշը 1.3գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
45	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ2)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼԱ7, միջին ճշտությամբ օպերացիոն ուժեղարար, պարունակում է 45 տրամաբանական էլեմենտ, լարումը ~ 15 Բ $\sim 10\%$, հոսանքի ծախսը 50մԱ, քաշը 1.3գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
46	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ7)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼՊ12, պարունակում է 2 տրամաբանական 4Ո-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
47	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼՊ12)	Ինտեգրալային միկրոսխեմա 198ՆՏ5Բ, տրանզիստորային $p-n-p$ մատրիցայով, պարունակում է 5 ինտեգրալային էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100000 ժամ, քաշը 0.8գ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
48	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 198ՆՏ5Բ)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼԱ1, պարունակում է 3 տրամաբանական Ո-ՈՒՈ էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
49	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ1)	Ինտեգրալային միկրոսխեմա 164Ե5, պարունակում է 2 տրամաբանական 2ՈՒՈ-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
50	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԵ5)	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼԵ5, պարունակում է 2 տրամաբանական 2ՈՒՈ-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100000 ժամ, Արտադրման տարեթիվ 2005թ. և բարձր
51	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-140Մ ռադիոկայանի հոսանքի ուղղորդիչ բլոկ)	հոսանքի ուղղորդիչ բլոկ ՎՈՒ-50 հավաքված պողպատյա կարկասում, կազմված է 5 առանձին ուղղորդիչ ենթաբլոկներից, ապահովում է

	ՎՈՒ-50)	+225վ, -100վ, +3000վ, -27վ, +350վ լարումներ, սնուցումը 220վ փոփոխական լարումից, դիմային մասում հոսանքի 3 անջատիչներ, 6 ապահովիչներ, հոսանքի միացման լամպեր, հսկիչ սարք, չափսերը 930x700x420 մմ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
52	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԻԵ2)	Միկրոսխեմա 164ԻԵ2, 5 նիշանոց հաշվիչ, կազմված 2 ձ տիպի տրիգերով, քաշը 1.7 գ, Արտադրման տարեթիվ 2008թ. և բարձր
53	Էլեկտրոնային պարագաներ (Սնուցման բլոկ DM-330M)	DM-330M Մոտոքային լարումը 220Վ, ելքային հաստատուն լարումը 5-15Վ, հոսանքի ուժը 25-30Ա, լարման և հոսանքի ցուցիչ, գերբեռնման ավտոմատ անջատիչ, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
54	Էլեկտրոնային պարագաներ (Դիմային պանել)	Icom IC-78, դիսփլեյով, ստեղնաշարով, դինամիկով, միացման շլեյֆներով և հաճախականության կարգավորիչով, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
55	Էլեկտրոնային պարագաներ (Դիմային պանել)	Icom R-75 , դիսփլեյով, ստեղնաշարով, դինամիկով, միացման շլեյֆներով, տպաստվով և հաճախականության կարգավորիչով, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
56	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի LCD էկրան)	IC F3026T ռ/կ-ի համար, LCD, Switching 0.3A 3-Pin EMD T/R, սնուցման լարումը 80վ, աշխատանքային ջերմ, -30 to +80 C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
57	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2SK2171)	IC R-75/R-78 ռ/կ-ի 2SK2171, Բարձր հաճախականության ԿԱ տիրույթի ռադիոկայանի համար, լարումը 40վ, աշխատանքային ջերմ, -50 to +150 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
58	Էլեկտրոնային պարագաներ (CTMFRC0204 ռեզիստոր)	Ռեզիստոր CTMFRC0204, նոմինալ դիմադրությունը 0.1Ω-10MΩ , հզորությունը 0.15Վտ, լարումը 200վ, աշխատանքային ջերմ, -55...155 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
59	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ9 12V)	Ռելե ՌԵՍ9 12V PC4.529.029-02, երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 65-79 Օհմ, հոսանքի աշխատանքային ուժը 80մԱ, աշխատանքային լարումը 10-18վ, բացթողման հոսանքի ուժը 13մԱ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
60	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ9 26V)	Ռելե ՌԵՍ9 26V PC4.529.029-01, երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 65-79 Օհմ, հոսանքի աշխատանքային ուժը 30մԱ, աշխատանքային լարումը 26-30վ, բացթողման հոսանքի ուժը 5մԱ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
61	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ10 12V)	Ռելե ՌԵՍ10 PC4.524.308,312, փաթույթի դիմադրությունը 108-132 Օհմ, հոսանքի աշխատանքային ուժը 35մԱ, աշխատանքային լարումը 7-15վ, բացթողման հոսանքի ուժը 5մԱ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
62	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ10 26V)	Ռելե ՌԵՍ10 PC4.524.302,314, փաթույթի դիմադրությունը 108-132 Օհմ, հոսանքի աշխատանքային ուժը 22մԱ, աշխատանքային լարումը 26վ, բացթողման հոսանքի ուժը 3մԱ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
63	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ34 PC4.524)	Ռելե ՌԵՍ34 PC4.524.370, հերմետիկ, երկդիրքային է փոխանցվող կոնտակտով, սնվում է հաստատուն հոսանքով, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
64	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՎ15 PՓ4.582.006)	Ռելե ՌԵՎ15 PՓ4.582.006, ոչ հերմետիկ, բարձր հաճախության, կոաքսալ, երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, սնվում է հաստատուն հոսանքով, աշխատանքային ջերմաստիճանը -60...105C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
65	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-161 կայանի Վ2 ռելե)	Ռ-161 կայանի համար բարձր հաճախականության ռելե, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
66	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՍ48)	Ռելե ՌԵՍ48 PC4.590.202(PՓ0.450.034TY), երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 340-460 Օհմ, աշխատանքային լարումը 10-13վ, հոսանքի աշխատանքային ուժը 52մԱ, բացթողման հոսանքի ուժը 6.8մԱ, աշխատանքային ջերմաստիճանը -60...85C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
67	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՆ33)	Ռելե ՌԵՆ33 PՓ4.510.021(PՓ4.510.021TY), երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 180 Օհմ, աշխատանքային լարումը 27վ, հոսանքի աշխատանքային ուժը 75մԱ, բացթողման հոսանքի ուժը 15մԱ, աշխատանքային ջերմաստիճանը -60...125C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
68	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ՌԵՆ34)	Ռելե ՌԵՆ34 XՓ4.500.000-01(XՓ0.450.000TY), 4 հատ երկդիրքային 2 փոխանցվող կոնտակտներով, փաթույթի դիմադրությունը 320 Օհմ, աշխատանքային լարումը 27վ, հոսանքի աշխատանքային ուժը 100մԱ,

		բացթողման հոսանքի ուժը 4մԱ, աշխատանքային ջերմաստիճանը - 60...125C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
69	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե ԿՆԵ130)	Ռելե ԿՆԵ130, աշխատանքային լարումը 12,24,27, հոսանքի աշխատանքային ուժը 25մԱ, աշխատանքային ջերմաստիճանը - 60...85C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
70	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե 8312-25Ա-27Վ)	Ռելե 8312-25Ա-27Վ, աշխատանքային լարումը 12,24,27, հոսանքի աշխատանքային ուժը 25մԱ, աշխատանքային ջերմաստիճանը - 60...85C, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
71	Էլեկտրոնային պարագաներ (Տրանսֆորմատոր SU-282-127/220-50)	Տրանսֆորմատոր SU-282-127/220-50, հզորությունը 390 Վտ, առաջնային փաթույթի հոսանքը՝ 3,5/2,0 Ա, քաշը 5,55 կգ, 11-12,17-18,13-14,19-20 փաթույթների էլքերի լարումը 250մ, թույլատրելի հոսանքի ուժը 0,4Ա, 15-16,21-22 փաթույթների էլքերի լարումը 25վ, թույլատրելի հոսանքի ուժը 0,4Ա, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
72	Էլեկտրոնային պարագաներ (Տրանսֆորմատոր ՏՆ-61-ՏԱՆ 61-127/220-50)	Տրանսֆորմատոր ՏՆ-61-ՏԱՆ 61-127/220-50, հզորությունը 190 Վտ, առաջնային փաթույթի հոսանքը՝ 1,66/0,95 Ա, քաշը 3,5 կգ, 7-8,9-10 փաթույթների էլքերի լարումը 6.3վ, թույլատրելի հոսանքի ուժը 6Ա, 11-12,14-15 փաթույթների էլքերի լարումը 5վ, թույլատրելի հոսանքի ուժը 8Ա, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
73	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-1 բենզոգրեզատի վեր.կ-տ)	Մագնետո M30E2 3 հատ, Կայծամոմ A11B 12 հատ, Կորբյուրատոր K41 3 հատ, Մխոց 2CԸ-1004015 3 հատ, Մխոցի կողակներ 2CԸ-1004026 20 հատ, Ծնկաձև լիսեռ առանցքակալներով 2CԸ-1005005-01 4 հատ, Շատուն վտուկով 2CԸ-1004130, 2CԸ-1004140 4 հատ, Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
74	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-2 բենզոգրեզատի վեր.կ-տ)	Մագնետո M151/M137/1302 4 հատ, Կայծամոմ CH302A 20 հատ, Կորբյուրատոր K16M/K45M 4 հատ, Մխոց 966-1004015A 4 հատ, Մխոցի կողակներ 966-1004022A 20 հատ, Ծնկաձև լիսեռ առանցքակալներով YԸ15-30-00A 3 հատ, Շատուն վտուկով 965-1004045A 4 հատ, Բենզոմոլիչ 965-1106010-11 4 հատ, Մխոցի մատիկ 966-1004020 4 հատ, Մխոցի յուղահան օղեր 966-1004035B 20 հատ, Մխոցի կոմպրեսիոն օղեր 966-1004025 20 հատ, Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
75	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-4 բենզոգրեզատի վեր.կ-տ)	Մագնետո M151/M137/1302 4 հատ, Կայծամոմ CH302A 20 հատ, Կորբյուրատոր K16M/K45M 4 հատ, Մխոց 966-1004015A 4 հատ, Մխոցի կողակներ 966-1004022A 20 հատ, Ծնկաձև լիսեռ առանցքակալներով YԸ25-30-00A 3 հատ, Շատուն վտուկով 965-1004045A 4 հատ, Բենզոմոլիչ 965-1106010-11 4 հատ, Մխոցի մատիկ 966-1004020 4 հատ, Մխոցի յուղահան օղեր 966-1004035B 20 հատ, Մխոցի կոմպրեսիոն օղեր 966-1004025 20 հատ, Արտադրման տարեթիվ 2010թ. և բարձր
76	Էլեկտրոնային պարագաներ (Հոսանքի փոխակերպիչ)	Առանձին մոդուլի տեսքով բլոկ, մուտքային լարումը՝ փոփոխական հոսանքից 230 Վ, հոսանքի ուժը 4Ա, էլքի լարումը 16Վ հաստատուն հոսանք, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
77	Էլեկտրոնային պարագաներ (Հոսանքի փոխակերպիչ)	Առանձին մոդուլի տեսքով բլոկ, մուտքային լարումը՝ փոփոխական հոսանքից 230 Վ, հոսանքի ուժը 10Ա, էլքի լարումը 24Վ հաստատուն հոսանք, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
78	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ1 բլոկ փոփոխական կոնդենսատոր կերամիկական ձողով)	Ռ-409-ի Բ1 բլոկ, գրգռիչ, փոփոխական կոնդենսատորի կերամիկական ձողով, աշխատանքային հաճախությունները - 601 100 կՀց, գեներացվող տատանումների հաճախության կայունությունը ~5գ10-5..., Մոդուլացվող ազդանշանների արդյունավետ շերտը 0,1 - 150 կՀց., Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
79	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ2 բլոկ փոփոխական կոնդենսատոր կերամիկական ձողով)	Ռ-409-ի Բ2 բլոկ, հետերոդին, փոփոխական կոնդենսատորի կերամիկական ձողով, աշխատանքային հաճախությունները 601 100 կՀց, գեներացվող տատանումների հաճախության կայունությունը ~5գ10-5..., Մոդուլացվող ազդանշանների արդյունավետ շերտը 0.1 - 150 կՀց, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
80	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ3 բլոկ)	Ռ-409-ի Բ3 գրգռիչի սնուցման բլոկ, սնուցումը միաֆազ փոփոխական հոսանքից 220վ, 50 Հց, անհրաժեշտ հզորության 120 վտ, ՕԳԿ 0.63, չափսերը 356x187x145 մմ. քաշը 8 կգ, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
81	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ5 բլոկ)	Ռ-409-ի ընդունիչի սնուցման Բ5 բլոկ, սնուցումը միաֆազ փոփոխական հոսանքից 220վ, 50 Հց, անհրաժեշտ հզորության 120 վտ, ՕԳԿ 0,63, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
82	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ6	կարգավորման բլոկ, ապահովում է բարձր հաճախականության 5

	բլոկ)	տեսակ ՏՂ.ՏՓ, ՄՈՂ.1, ՄՈՂ.11, ՔԵՏՔ, ԿԻՓ. հաղորդման-ընդունման նոմինալ մակարդակը հաղորդում +0,3 Կո (+2,6 ԺԵ), ընդունում -1 Կո (-8,7 ԺԵ), կազմված է Մ1, Մ2, Մ3, Մ4, Մ5 ելքաբլոկներից, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
83	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ7 բլոկ)	Ընդունիչ բլոկ A – 60–120 ՄԴս, կամ Ե – 120,2–239,8 ՄԴս, կամ Ե – 240,4–479,6 ՄԴս, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
84	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ8 բլոկ)	Հաղորդիչ բլոկ A – 60–120 ՄԴս, կամ Ե – 120,2–239,8 ՄԴս, կամ Ե – 240,4–479,6 ՄԴս, ելքային հզորությունը 40Վտ, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
85	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ10 բլոկ)	Բ10 անցնող հզորության ինդիկատորային բլոկ, բյուրոյա ուղղորդիչ դեղեկտորով և ամպերմետրով, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
86	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ30 բլոկ)	Բարձր հաճախականության հովացուցչային Բ30 բլոկ, բյուրոյա ուղղորդիչ դեղեկտորով և ամպերմետրով, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
87	Էլեկտրոնային պարագաներ (ՇԱԶ բլոկ)	Ավտոմատ պաշտպանիչ բլոկ ՇԱԶ մուտքային բլոկ, բյուրոյա ուղղորդիչ դեղեկտորով և ամպերմետրով, Արտադրման տարեթիվ 1991թ. և բարձր
88	Էլեկտրոնային պարագաներ (Մնուցման բլոկ PS3010)	PS3010 թվային դիսփլեյով սնուցման բլոկ, մուտքային լարումը՝ փոփոխական հոսանքից 230Վ, հոսանքի ուժը՝ կարգավորվող 0-10Ա, ելքի լարումը՝ կարգավորվող 0- 30Վ հաստատուն հոսանք,, Արտադրման տարեթիվ 2014թ. և բարձր

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:

ԳՆՈՐԴ
 ՀՀ պաշտպանության նախարարություն

ՎԱՃԱՌՈՂ
 «Մ-Թրեյդայն» ՍՊԸ

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի 7ԺԿ

տնօրեն



Կ. ԿԱՐԱՄԵՏՅԱՆ

Ա. ՍՈՒԲՐԱՅԱՆ

Լ.Մ. Մ. Չևիկյան
 (Ձ/Վ. 006 016729)

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համար	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	Էլեկտրոնային պարագաներ (Մինի ԱՀԿ-ի սնուցման բյուկ)	հատ	2	144000	288000	2
2	Էլեկտրոնային պարագաներ (TA-57 հեռախոսային ապարատի վեր. կոմպլեկտ N 1 արկղ)	լ-մ	10	62400	624000	10
3	Էլեկտրոնային պարագաներ (հտաացուցիչ Պ-303-ի LO-1 բյուկ)	լ-մ	1	452100	452100	1
4	Էլեկտրոնային պարագաներ (հտաացուցիչ Պ-303-ի ԻՊՕ-3 բյուկ)	լ-մ	1	442200	442200	1
5	Էլեկտրոնային պարագաներ (հտաացուցիչ Պ-303-ի ԻՕ-3 բյուկ)	լ-մ	1	442200	442200	1
6	Էլեկտրոնային պարագաներ (Տպասայ)	հատ	2	234000	468000	2
7	Էլեկտրոնային պարագաներ (Տպասայ)	հատ	1	210000	210000	1
8	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1ժ29Բ)	հատ	200	960	192000	200
9	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1ժ24Բ)	հատ	200	960	192000	200
10	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 1Պ24Բ)	հատ	200	960	192000	200
11	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ ԳՈՒ78Բ)	հատ	10	96000	960000	10
12	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ1Պ)	հատ	20	1410	28200	20
13	Էլեկտրոնային պարագաներ (Լամպ 6ժ2Պ)	հատ	20	1410	28200	20
14	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ814)	հատ	40	432	17280	40
15	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ815)	հատ	40	432	17280	40
16	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ813)	հատ	30	432	12960	30
17	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ816)	հատ	30	432	12960	30
18	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ818)	հատ	30	432	12960	30
19	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2ՏՍ613)	հատ	15	760	11400	15
20	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ955Ա)	հատ	5	3852	19260	5
21	Էլեկտրոնային պարագաներ (Դիոդ CHNC202KPT)	հատ	10	3810	38100	10
22	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր Պ210Ե)	հատ	100	780	78000	100
23	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր Պ217Վ)	հատ	100	594	59400	100
24	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ808Ա)	հատ	30	760	22800	30
25	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ809Ա)	հատ	30	760	22800	30

26	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ812Ա)	հատ	30	1150	34500	30
27	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ827Ա)	հատ	30	1340	40200	30
28	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ840Ա)	հատ	30	1150	34500	30
29	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ904Ա)	հատ	30	1700	51000	30
30	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Ա)	հատ	30	2100	63000	30
31	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Բ)	հատ	30	2590	77700	30
32	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ920Վ)	հատ	30	3450	103500	30
33	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ950Ա)	հատ	10	6702	67020	10
34	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ951Վ)	հատ	10	6702	67020	10
35	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2Տ208Ա)	հատ	30	800	24000	30
36	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր ԿՏ608Բ)	հատ	30	1700	51000	30
37	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 134ԼՌ1)	հատ	20	2200	44000	20
38	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ3)	հատ	20	1602	32040	20
39	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ7)	հատ	20	1602	32040	20
40	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 133ԼԱ8)	հատ	20	1602	32040	20
41	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 140ՌԻԴԱ)	հատ	20	1452	29040	20
42	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՊ1)	հատ	20	4704	94080	20
43	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 142ԵՆ1Բ)	հատ	20	2850	57000	20
44	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 159ՆՏ1)	հատ	20	1425	28500	20
45	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ2)	հատ	20	1404	28080	20
46	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ7)	հատ	10	1704	17040	10
47	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼՊ12)	հատ	20	1704	34080	20
48	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 198ՆՏ5Բ)	հատ	20	2802	56040	20
49	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԱ1)	հատ	20	1704	34080	20
50	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԼԵ5)	հատ	20	1704	34080	20
51	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-140Ս ռադիոկայանի հոսանքի ուղղորդիչ բլոկ ՎՌԻ-50)	հատ	2	240000	480000	2
52	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա 164ԻԵ2)	հատ	20	942	18840	20
53	Էլեկտրոնային պարագաներ (Սնուցման բլոկ DM-330M)	հատ	10	86400	864000	10
54	Էլեկտրոնային պարագաներ (Դիմային պանել)	հատ	3	114000	342000	3
55	Էլեկտրոնային պարագաներ (Դիմային պանել)	հատ	3	161000	483000	3
56	Էլեկտրոնային պարագաներ (ո/կայանի LCD էկրան)	հատ	10	10500	105000	10

57	Էլեկտրոնային պարագաներ (n/կայանի տրանզիստոր 2SK2171)	հատ	20	1404	28080	20
58	Էլեկտրոնային պարագաներ (CTMFCR0204 ռեզիստոր)	հատ	20	960	19200	20
59	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ9 12V)	հատ	20	762	15240	20
60	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ9 26V)	հատ	40	762	30480	40
61	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ10 12V)	հատ	20	762	15240	20
62	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ10 26V)	հատ	40	762	30480	40
63	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ34 PC4.524)	հատ	20	2004	40080	20
64	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՎ15 PՓ4.582.006)	հատ	5	6702	33510	5
65	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-161 կայանի Վ2 ռեյն)	հատ	10	15000	150000	10
66	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՍ48)	հատ	30	2800	84000	30
67	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՆ33)	հատ	30	2800	84000	30
68	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՌԵՆ34)	հատ	30	2800	84000	30
69	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն ՎՆԵ130)	հատ	5	4800	24000	5
70	Էլեկտրոնային պարագաներ (Ռեյն 8312-25Ա-27Վ)	հատ	5	4800	24000	5
71	Էլեկտրոնային պարագաներ (Տրանսֆորմատոր ՏԱ-282-127/220-50)	հատ	3	14500	43500	3
72	Էլեկտրոնային պարագաներ (Տրանսֆորմատոր ՏՆ-61-ՏԱՆ 61-127/220-50)	հատ	3	14500	43500	3
73	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-1 բենզոազրեզատի վեր.կ-տ)	հատ	1	297000	297000	1
74	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-2 բենզոազրեզատի վեր.կ-տ)	հատ	1	748002	748002	1
75	Էլեկտրոնային պարագաներ (ԱԲ-4 բենզոազրեզատի վեր.կ-տ)	հատ	1	790002	790002	1
76	Էլեկտրոնային պարագաներ (Հոսանքի փոխակերպիչ)	հատ	10	8604	86040	10
77	Հոսանքի փոխակերպիչ	հատ	10	14502	145020	10
78	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ1 բլոկ փոփոխական կոնդենսատոր կերամիկական ձողով)	հատ	1	144000	144000	1
79	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ2 բլոկ փոփոխական կոնդենսատոր կերամիկական ձողով)	հատ	2	139002	278004	2
80	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ3 բլոկ)	հատ	2	139002	278004	2
81	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ5 բլոկ)	հատ	2	144000	288000	2
82	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ6 բլոկ)	հատ	2	144000	288000	2
83	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ7 բլոկ)	հատ	2	153000	306000	2
84	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ8 բլոկ)	հատ	2	153000	306000	2
85	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Բ10 բլոկ)	հատ	2	43002	86004	2

86	Էլեկտրոնային պարագաներ (Ռ-409-ի Ք30 բլոկ)	հատ	2	67002	134004	2
87	Էլեկտրոնային պարագաներ (ՇԱԶ բլոկ)	հատ	2	67002	134004	2
88	Էլեկտրոնային պարագաներ (Սնուցման բլոկ PS3010)	հատ	10	76002	760020	10

ԳՆՈՐԳ
 ՀՀ պաշտպանության նախարարություն

ՎԱՃԱՌՈՂ
 «Մ-ԹԻԵԼԻՎԱՅՆ» ՍՊԸ

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԵՂ

տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՍՈՒԲԻԱՅԱՆ



Հ Ն Ն Ստիվենյան
 (Ն/Դ. ԵԵԵԵ(6229) Ս. Ստիվենյան

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՍՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) _____ և
(Գնորդի անունը)
_____ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____ -- -ին հանձնման-ընդունման
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն